486

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«22» 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 005 - 24

Ձեռնարկողը՝ ***«Ջի Թի Բի Սթիլ» ՍՊԸ***
ք. Երևան, Պռոշյան 12

Գործունեությունը՝ ***Արարատի մարզի Արարատ համայնքում սև մետաղի ջարդոնի վերամշակման գործարանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 005 - 24

«22» հունվարի **2024թ.**

Արարատի մարզի Արարատ համայնքում սև մետաղի ջարդոնի վերամշակման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ջի Թի Բի Սթիլ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /ՇՄԱԳ/ նախագծային փաստաթղթեր
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ բնակավայր

Ներածական մաս. Վարչական տեսակետից հայցվող տարածքը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքում՝ Արարատ գյուղի տարածքում: Տեղամասը գտնվում է ՈԿՖ Զոդ բանավանից մոտ 1.5 կմ, իսկ Արարատ գյուղից՝ 1.78 կմ հեռավորության վրա դեպի արևմուտք, Սուրենավան գյուղից՝ մոտ 3 կմ վրա դեպի հյուսիս-արևելք: Ընտրված արտիրապարակից մոտ 0.9 կմ հեռավորության վրա դեպի հարավ-արևելք սկսվում են Արարատ գյուղի մշակվող հողատարածքները: Ամենակարճ հեռավորությունը ընտրված տեղամասից մինչև ՀՀ պետական սահմանը կազմում է 5 կմ: Հեռավորությունը մինչև Ադրբեջանի հետ սահմանը՝ 12-13 կմ: Ըստ ներկայացված հաշվետվության՝ նախատեսվող գործունեությունը չի հանդիսանում անդրսահմանային, քանի որ նրա ֆիզիկական աղբյուրն ամբողջությամբ կամ մասամբ չի գտնվում այլ պետության իրավազորության ներքո տարածքում: Նախատեսվող գործունեությունը չի հակասում Էսպո-ի կոնվենցիայի դրույթներին՝ սույն կոնվենցիայի իմաստով բացասական ազդեցություններ չեն արտահայտվում մեկ այլ պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում: Գործարանի նախատեսվող տարածքը 8.91 հա է, որն իրենից ներկայացնում է աղակալված, ուժեղ հիմնային հողեր՝ գյուղատնտեսության համար ոչ պիտանի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի, 3-րդ մասի, 5)-րդ կետի բ. ենթակետի՝ դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նկարագրական մաս. ՀՀ-ում շահագործվող երկաթի հանքեր չկան, սակայն պողպատից ստացվող արտադրանքի պահանջարկը Հանրապետությունում գնալով աճում է:
Դա կախված է նաև Հանրապետությունում շինարարության ծավալի աննախադեպ աճի հետ, որի համար անհրաժեշտ հիմնական նյութերից մեկը հանդիսանում է որակյալ և մատչելի գներով ամրանի (արմատուրայի) ձեռքբերումը: Ամրանը Հայաստանը հիմնականում ձերք է բերում Ռուսաստանից, Ուկրաինայից, Պարսկաստանից, որոշ քանակն էլ արտադրվում է Հայաստանում:

Ներդրվող տեխնոլոգիան և օգտագործվող սարքավորումները արդիական են և ՀՀ-ում կիրառվում են առաջին անգամ: Օրինակ, գնդային աղացագնդերի համար ՀՀ ներդրված տեխնոլոգիան նախատեսում է ջարդոնի ձուլման վառարանի պարբերաբար օգտագործում, որից հետո վառարանը ամբողջովին դատարկվում է և բեռնվում նոր մասնաբաժնով: Աղացման գնդերը ստանալու համար օգտագործվում են ավազակավային կոճղակաղապարներ: Կոճղակաղապարը իրենից ներկայացնում է քվարցային ավազի, հեղուկ ապակու և բենտոնիտի խառնուրդ: Կոճղակաղապարներից հանված գնդերը անցնում են լրացուցիչ մշակում թրթռամաղի վրա, որտեղ ազատվում են ավազից, կավից և ձուլվածքամնացորդներից: Խարամից ազատված աղացագնդերը տալիս են թմբկահեղկման սարք՝ մաքրամշակման: Կոճղակաղապարները նորից պատրաստվում են կաղապարման մեքենայում, վերադառնում գործընթաց, իսկ մնացորդները հանդիսանում են թափոններ: Առաջարկվող արդիական տեխնոլոգիան անընդհատ է՝ գնդերը ստանում են պարուրավոր գլոցահաստոնի շնորհիվ, առանց կոճղակաղապարների օգտագործման: Կազմակերպվող գործարանում նախատեսում են ստանալ ամրաններ և աղացման համար գնդեր: Գործարանի համար հումք է հադիսանում սև մետաղի ջարդոնը, որը գնվում է հիմնականում ջարդոնների ընդունման կետերից: Գործարանի տարեկան արտադրողականությունը նախատեսվում է 108 000 տոնա սև մետաղի ջարդոնի վերամշակում: Մետաղաջարդոնի արտաչափ կտորները կտրվում են գազաեռակցման եղանակով: Վառարանները ինդուկցիոն տիպի են, աշխատում են հոսանքով: Վառարանները հոսանքով ապահովելու համար նախագծման տարածքում նախատեսվում է կառուցել 110/10կՎ ենթակայան՝ սեփական կարիքների համար, որի հզորությունը կազմելու է 1x25.0կՎԱ: Ջրապահանջը նախատեսվում է ապահովել կամ գրունտային ջրերի հաշվին, որոնց մակարդակը տարածքում շատ մոտ է մակերեսին, կամ "Վեոլիա Ջուր" ՓԲԸ-ից: Ընդունված ջարդոնը տեսակավորվում է և բեռնվում 25տ Electrotherm India Limited մակնիշի ինդուկցիոն վառարան, ավելացնում են կիր ու հալեցնում: Ձուլումը իրականացվում է 1700-1800°C ջերմաստիճանի տակ:
Հալվածքից վերցվում է նմուշ և ուղարկվում լաբորատորիա անալիզի: Լաբորատորիայից ստացված անալիզի հիման վրա, որոշվում է հավելանյութերի ավելացման քանակը և տեսակը, որպեսզի ստանան անհրաժեշտ մակնիշի պողպատ: Որպես հավելանյութ օգտագործում են ֆեռոսիլիցի (FeSi), ֆեռոմանգանի (FeMn), անհրաժեշտության դեպքում նաև փոքր քանակի ածուխ: Ավելացվող նյութերի արդյունքում ստանում են պահանջվող որակի պողպատի մակնիշներ՝ Fe-415, Fe-500, Fe-550: Վերջազատումից հետո (доводка) հալույթը բարձում են շերեփի մեջ և լցնում անընդհատ գործող հալույթից նախապատրաստվածքի ստացման վառարան: Վառարանից դուրս եկող հալվածքը հովացվում է ջրերով կրիստալիզատորում, որտեղ սառեցվում է միայն հալվածքի մակերեսը: Ստացված նախապատրաստվածքը տալիս

են հոլովակուղի (рольганг), որտեղից նա ուղղվում է կամ գլոցահաստոց (прокатный стан) աղացման պողպատե գնդերի ստացման համար, կամ ամրանների ստացման գլոցահաստոց:
Գործարանը տարեկան աշխատելու է 360 օր, օրը 24 ժամ:

Գործարանը նախատեսվում է կառուցել չօգտագործվող աղակալված տարածքում, որտեղ հողերը վերին ու ստորին հորիզոններում ուժեղ հիմնային են և աղակալված, իսկ բուսածածկույթը առկա է մակերեսի 40%-ում, հաճախ առանձին բույսերի տեսքով, ինվազիվ մոլախոտների մեծ քանակով: Այս տարածքի անմիջական մոտակայքում չկան պատմական հուշարձաններ ու բնության պահպանվող տարածքներ: Տարածքի ընտրությունը, կիրառվող արդիական տեխնոլոգիան և նախատեսվող բնապահպանական միջոցառումները նվազագույնի պետք է հասցնեն շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացասական ազդեցությունը: Մետաղի ձուլումը իրականացվելու է ինդուկցիոն (էլեկտրական) վառարաններում, որի համար բնական գազ չի ծախսվում, հետևաբար գազի այրումից արտանետումներ մթնոլորտ տեղի չի ունենալու: Գործարանի շահագործման արդյունքում կզարգանան տարածաշրջանի ենթակառուցվածքները, ինչի հաշվին կարող են ստեղծվել նոր աշխատատեղեր:

Վառարանից հեռացվող բարձր ջերմաստիճան ունեցող գազի խողովակի վրա նախատեսվում է տեղադրել կայծամարիչ՝ հրդեհներից խուսափելու նպատակով:
Տաք գազերը մուտք են գործում սառեցման խցիկ, որի ներսում տեղադրված են լինելու բազմաշերտ թիթեղներ՝ ջրմաստիճանը կլանելու և գազի արագությունը գցելու համար: Մուտք գործող բարձր ջերմաստիճանի գազերը խցիկում սառեցումից բացի, տեղի է ունենում արագության անկում, որի շնորհիվ 4 մկ չափից մեծ մասնիկների 10-20% նստում է խցիկում: Գազերի ջրմաստիճանը զտիչի մուտքում պետք է կազմի ոչ ավել քան 80-1000C:

Գազերը փոշուց մաքրման համար նախատեսվում է ճկափողային զտիչները, որոնց արդյունավետությունը կազմում է 99%: Զտիչը կահավորված կայծամարիչով, զտիչի գործվածքը նախապես խոնավեցվում է կալցիումի հիդրոքսիդով, ինչը թույլ է տալիս մաքրել գազերը փոշուց և գազային խառնուկներից: Զտիչի բունկերի դատարկումը և վերականգնումը իրակացվում է կամ սեղմված օդով, կամ թրթռման շնորհիվ: Զտիչի թևքային գործվածքները փոխարինվում են 2-3 տարին մեկ անգամ: Բունկերում կուտակված փոշին վերադարձվում է ձուլման վառարան: Զտիչներում օգտագործվելու է տեֆլոնային գործվածք /550գ/քմ/, որն ունի եռակի կար, դիմանում է մինչև 120°C ջերմաստիճանին: Զտիչի գործվածքի ճիշտ ընտրությունից է կախված նրա արդյունավետ աշխատանքը կլանվող դիսպերսիոն մասնիկների չափսերը և այլն: Ինդուկցիոն վառարաններից արտանետվող գազերում փոշու պարունակությունը մի քանի անգամ քիչ է, քան աղեղային վառարաններից և կազմում է 0,5-1,0գ/խմ: Եթե անհրաժեշտ լինի տեխնոլոգիական գործընթացում պարբերաբար իրականացնել թթվածնով փչահարում՝ փոշու պարունակությունը վառարանից դուրս եկող գազերում հասնելու է մինչև 5գ/խմ: Արտանետվող գազերը պարունակում են նաև ածխածնի օքսիդ և երկօքսիդ, ջրածին, թթվածին, ազոտ:
Գազերի մաքրման երկրորդ փուլում նախատեսվում է տեղադրել թաց սկրուբեր, որը թույլ կտա լրացուցիչ մաքրել գազերը փոշուց և ազատվել գազատեսակ աղտոտող նյութերից:
Գազերը, փոշին մաքրելու համար նախատեսվում է ասպիրացիոն համակարգ և գազամաքրման երկու փուլ, որը թույլ կտա մթնոլորտ արտանետվող գազերում վնասակար նյութերի պարունակությունները հասցնել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացի այդ, մթնոլորտում ցրման պայմանները բարելավելու համար նախատեսվում է գազերի մթնոլորտ արտանետման համար 33-35մ բարձրությամբ խողովակ, որի ներքևի տրամագիծը կլինի 1500մմ, իսկ վերևինը՝ 1000մմ: Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, УПРЗА ''Эколог'' версия 4.60 ծրագրով, Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները մոտակա բնակելի գոտում (Արարատ գյուղ) գտնվում են նորմերի սահմաններում: СН 245-71 նորմերով սև մետաղի ջարդոնի վերամշակման համար ՍՊԳ չի նախատեսվում:

Գործարանում ջուրը ծախսվելու է տեխնիկական և կենցաղային կարիքների համար: Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել հորատանցքից, իսկ խմելու որակի ջուրը՝ «Վեոլիա Ջուր» ընկերությունից: Տեխնիկական ջուրը ծախսվում է վառարանի, շերեփի, կրիստալիզատորի նախա-պատրաստվածքի հովացման համար և գործարանի հատակների հիդրոմաքրման համար: Հովացման ջրերի համար գործելու է շրջանառու համակարգ: Հովացումը նախատեսվում է իրականացնել FL-250 մակնիշի հովացման կայանի օգնությամբ՝ 13,7 խմ/ժամ արտադրողականությամբ: Հովացման կայանը ամբողջությամբ ավտոմատացված է: Օրական շրջանառու ջրի ծախսը ըստ նախագծի նախատեսվում է 328,8խմ/օր: Վառարանների հովացման համար ջուրը չպետք է լինի կոշտ, որպեսզի խուսափեն խողովակների խցանումից:

Թարմ տեխնիկական ջուրը ծախսվում է միայն շրջանառու համակարգի լրասնուցման համար: Արտադրական գործընթացից ջրերի արտահոսք չի նախատեսվում, գործարանը աշխատում է լրիվ շրջանառու համակարգով: Գործարանի կանաչապատ տարածքների ոռոգման և բաց հրապարակների ջրցանման համար ջուրը վերցնում են գյուղի ոռոգման ցանցից: Կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է արդիական ինքնավար կենսաբանական մաքրման կայան, 95-98 % արդյունավետությամբ: Գործարանի կեղտաջրերը ուղղվում են կենսաբանական մաքրման կայան: Թարմ խմելու ջրի ծախսը տարեկան կազմում 3549 խմ: Խմելու տնտեսական և սանիտարական օգտագործումից ջրի տարեկան կորուստը կազմում է մոտ 10%: Գործարանի հատակների լվացումից առաջացած կեղտաջրերը դրենաժային համակարգի միջոցով հեռացվում են տնտեսակենցաղային կեղտաջրերի հետ համատեղ:

Հայցվող տեղամասի կորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

Ծայրակետի համար	Ծայրակետի կոորդինատները	
	Y	X
1	8477515.7265	4410068.6565
2	8477212.4540	4410350.9070
3	8477346.4748	4410523.6906
4	8477600.8724	4410342.0400
5	8477609.4840	4410334.9589

Համաձայն ՀՀՇՆ 20.04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»-ի, Արարատ համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում:

Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են A=0.3g և ունի 8-9 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան: СН 245-71-ում «Металлургические, машиностроительные и металлообрабатывающие предприятия и производства» գլխում դաս II ՍՊԳ սահմանված է տոմասշլակի վերամշակման և այլն համար 500մ:

Արարատի խոշորացված համայնքի տարածքի ջրագրական ցանցը ներկայացված է Արաքս գետով՝ իր Վեդի վտակով: Անմիջապես Արարատ քաղաքի գտնվելու շրջանում մակերևութային ջրահոսքերը բացակայում են: Նախագծվող գործարանի արտհրապարակից ամենակարճ հեռավորությունը մինչև Արաքս գետը կազմում է 7.2կմ, իսկ մինչև Վեդի գետը՝ 8.4 կմ: Հաշվի առնելով որ սև ջարդոնի վերամշակման գործարանի շահագործման հետևանքով որևէ կեղտաջրերի արտահոսքը դեպի շրջակա միջավայր տեղի չի ունենա, իսկ հեռավորությունը մինչև մակերևութային ջրահոսքերը բավականին մեծ է՝ գործարանի գործունեությունը չի ազդի մակերևութային ջրային ռեսուրսների վրա:

Նախագծվող սև ջարդոնի վերամշակման գործարանի շրջակա տարածքների հողերի վիճակը գնահատելու նպատակով 2023 թ. հուլիսին իրականացվել են տարածքի դաշտային ուսումնասիրությունները: Ուսումնասիրության ընթացքում ընտրվել են հետազոտության տարածքներ և դիտակետեր, փորվել կտրվածքներ և տարբեր հորիզոններից վերցվել հողանմուշներ: Տարածքի ռելիեֆից ելնելով ընտրվել են երկու դիտակետեր: Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները, կարելի է ասել, որ ուսումնասիրված տարածքում հանդիպում է աղուտ-ալկալի հողերի գենետիկական երկու խմբերից մարգագետնայինը (այն հանդիպում է համեմատաբար ոչ խոնավ շրջաններում): Հողերի տեքստուռան եղել է "լավ": Առավել ցածր ծակոտկենություն և ջրակլանման ընդունակություն նկատվել է հողի վերին հողաշերտերում, որը կարող է պայմանավորված լինել նատրիումի բարձր պարունակությամբ: Նատրիումը փոխանակման ռեակցիայի մեջ է մտնում մագնեզիումի և կալցիումի հետ, դուրս է մղում դրանց, վնասում է հողի կառուցվածքը՝ այն դարձնելով խիտ և անթափանց: Ընդհանուր առմամբ օրգանական աշխածնի և հումուսի պարունակությունները համեմատաբար ցածր են: Հողի ջրային քաշվածքում բարձր է եղել բույսերի համար վտանգավոր նատրիում և քլոր իոնների պարունակությունը: Ուսումնասիրված հողերի աղակալվածության աստիճանը եղել ծայրահեղ աղակալված, իսկ ալկալիացման աստիճանը՝ շատ ուժեղ հիմնային: Հիմնվելով վերը նշվածի վրա միանշանակորեն կարելի է ասել, որ այս հողերը նպատակահարմար չեն գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար: Հետևաբար կարիք չկա հանել և տեղափոխել հողի վերին շերտը կառուցվող գործարանի տարածքից:

Վերամշակման գործարանի կառուցման համար նախատեսված տարածքը գնահատելու նպատակով 2023 թ. հուլիս ամսին նախագծման տարածքում ու նրա շրջակայքում կատարվել է ֆլորայի և բուսականության ուսումնասիրություն: Դաշտային ուսումնասիրությունները կատարվել են մարշրուտային մեթոդով, կատարվել են բուսականության նկարագրություն և բուսատեսակների հերբարիումային հավաքներ, տվյալ սեզոնի ֆլորայի կազմը բացահայտելու նպատակով: Գարնանային ֆլորայի տեսակային կազմի որոշման նպատակով ուսումնասիրվել են նաև ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումային նյութերը և նախորդ տարիներին կատարված գիտարշավների արդյունքները: Ուսումնասիրված տարածքի տեսակների մեջ առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության

Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են: ՀՀ էնդեմիկ և ռելիկտային տեսակներ ուսումնասիրվող տարածքում ևս չկան:

Արարատ քաղաքի գտնվելու շրջանում հայտնի են 2 բնության հուշարձան, որից մեկը նաև հատուկ պահպանվող տարածքն է (պետական արգելավայր)՝ Աղակալած ճահճուտ՝ գտնվում է Արարատ քաղաքում, հանքային աղբյուրների մոտ, մոտ 850 մ ծ.մ. բարձրության վրա: Գրանցված է ՀՀ ՇՄՆ բնության հուշարձանների պետական ցանկում 2008 թ. օգոստոսի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Կառավարության որոշման համաձայն; հեռավորությունը մինչև նախագծվող գործարանի արտհրապարակը կազմում է 1.7 կմ: «Գոռավանի ավազուտներ», գտնվում է Արարատյան գոգավորության թեք հարթություններում, Գոռավան գյուղի վարչական տարածքի հարավ-արևելյան մասում, 920-980 մ ծ.մ. բարձրության վրա: Բնության հատուկ պահպանվող տարածք է, «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի կանոնադրությունը և տարածքի չափը հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 25-ի N 975-Ն որոշմամբ, որի համաձայն «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, առանց արգելավայրի կարգավիճակի փոփոխության, հանձնվել է ՀՀ ՇՄՆ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ ենթակայությանը: ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N324-Ն որոշմամբ հաստատվել է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահման-ները և հատակագծը: Ներկայումս այն զբաղեցնում է 95,99 հա տարածք: Հեռավորությունը նախագծվող գործարանի տարածքից մինչև պետական արգելոցի սահմանը կազմում է 7.3 կմ:

Ձուլման արդյունքում առաջացած խարամ սև մետաղաջարդոնի ձուլման արդյունքում առաջանում է 1-2 % խարամ, որի տիպային բաղադրությունը կազմում է, %՝ CaO 40–50; SiO2 10–20; FeO 15–20; MnO 5–12; MgO 6–10; A12O3 2–3; P2O5 до 1,5: Տարեկան 108 000տ արտադրողականության դեպքում կառաջանա 1620տ խարամ: 25.12. 2006 թվականի N430-ն հրամանի հավելվածի ցանկում սև մետաղի ջարդոնի ձուլումից առաջացաց խարամի համար վտանգավորության դասը բացակայում է: Խարամը օգտագործվում է ճանապարհաշինությունում՝ 30% փոխարինելով խիճը, ինչը իջեցնում է ճանապարհաշինության արժեքը: Բետոնի արտադրությունում՝ որպես սորբենտ կեղտաջրերի մաքրման համար և այլն: Յուղոտված լաթեր թափոնները առաջանում են յուղոտված մակերեսների, ձեռքերի, սարքավորումների սրբման և մաքրման արդյունքում: Թափոնի կազմը՝ գործվածք՝ 81-84%, յուղ՝ 10-12%, ջուր՝ 3-6%: Վտանգավորության դասը 58200600 01 01 4: Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հատուկ նախատեսված մետաղական տարողություններում, որտեղ որոշակի քանակությամբ կուտակված թափոնները պարբերաբար տեղափոխվում են աղբավայր: Տարեկան կառաջանա մոտավոր 100կգ 0,1տ ծավալով թափոն: Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասը և այլն: Թափոնների առաջացման նորման 0,3 մ3/տարի՝ 1 մարդու համար: Տեսակարար կշիռը՝ 0,25տ/խմ: Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4: Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվում են աղբավայր, որի տեղանքը պետք է համա-

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՅԺ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ձայնեցված լինի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: 250 աշխատողների դեպքում տարեկան կառաջանա 250 x 0,3x 0,25=18,75տ կենցաղային աղբ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Գործարանում նախատեսվում է ասպիրացիոն համակարգ, երկու փուլային գազա-փոշեմաքրում և 33-35մ բարձրությամբ գազերի արտանետման խողովակ, ինչը կբարելավի ցրման պայմանները: Տեղադրվելու արդիական ճկափողային զտիչ, որի արդյունավետությունը կազմում է 99%: Բացի այդ զտիչների գործվածքները նախապես խոնավեցվում է կալցիումի հիդրոօքսիդով, ինչը թույլ է տալիս մաքրել գազերը փոշուց և գազային խառնուկներից:

- Ասպիրացիոն համակարգը պետք է բացառի անկազմակերպ արտանետումները մթնոլորտ,
- գործարանը աշխատելու է ավտոմատացված ջրի շրջանառու համակարգով, ինչը կբացառի արտադրական ջրերի արտահոսքը շրջակա միջավայր և կխնայի թարմ ջուրը,
- կենցաղային կեղտաջրերը մինչ արտահոսքը մաքրվելու են առնվազն 95% արդյունավետության իքնավար կենսաբանական մաքրման կայանում,
- վառարանի խարամը նախատեսվում է օգտագործել ճանապարհաշինությունում և այլ նպատակներով՝ այսպիսով, կրճատելով թափոնակուտակումը աղբավայրերում,
- շինարարության ավարտից հետո գործարանի տարածքը բարեկարգվելու է և կանաչապատվելու,
- արգելվում է լրացուցիչ տարածքների խախտումը, տարածքից դուրս թափոնների կուտակումը:

Հակավթարային միջոցառումներ՝ տեղամասը պետք է ապահովված լինի փրկաելքերով, պատերին փակցված լինեն տեղահանման քարտեզ-սխեմաներ:

Նախագծվող արտադրամասը պատկանում է չափավոր հրդեհավտանգ արտադրություններին: Ծածկի տակ գտնվող, 2 արտաքին պատերով շինության կատեգորիան ըստ հրդեհավտանգության՝ Գ, ներքին առանձնացված տեղամասերի IV աստիճանի հրակայնությամբ (առկա պահվում են, վերամշակվում, տեղափոխվում) չվառվող նյութերը՝ տաք, շիկացած և/կամ հալված վիճակում, որոնց վերամշակման գործընթացը ուղեկցվում է ճառագայթային ջերմության, կայծերի և/կամ բոցի անջատմամբ, ինչպես նաև այրվող գազերը, հեղուկները և/կամ պինդ նյութերը, որոնք վառվում են կամ օգտահանվում են որպես վառելանյութ): Ներքին հրդեհի մարման համար ջրի ծախսը չի նախատեսվում՝ համաձայն ՀՀՇՆ 40.01.01-2014: Արտաքին հրդեհի մարման համար ջրի ծախսը որոշված է համաձայն ՇՆևԿ 2.04-02-84 «Ջրամատակարարում: Ըստ ՇՆևԿ СНИП 2.04-02-84, արտաքին հրդեհի մարման համար ջրի ծախսը կազմում է 15.0 լ/վրկ՝ ելնելով շինության առավելագույն ծավալից և կատեգորիայից: Ըստ ՇՆևԿ 2.04-02-84 2.16 կետի, արտադրական մեկ-կամ երկհարկանի շենքերի համար, որոնց առավելագույն բարձրությունը չի գերազանցում 18 մ և որոնք ունեն կրող պողպատե կառուցատարրեր (հրակայունության լիմիտը ոչ պակաս քան 0.25 ժամ) և պողպատե պրոֆիլավորված թերթերից պատրաստված պատող կառուցատարրեր (պատեր և պատվածքներ)՝ կիզելի ջերմապահպանիչով, ջրի ծախսն անհրաժեշտ է ընդունել 10 լ/վրկ-ով: Արտաքին հրդեհի մարման համար ջրի ծախսը ընդունված է՝ 15+10=25 լ/վրկ: Հրաշիջումը նախատեսվում է թարմ ջրի համակարգից, դրա համար արտահրապարակում կտեղադրվեն երկու ռեզերվուարներ 100 և 40տ տարողությամբ: Արտադրամասի արտադրական

02543163
ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

հրապարակի ջրամատակարարման օղակաձև ցանցի վրա, ջրհորներում նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտներ: Շինությունը պետք է ունենա հողանցում, գործարանում պետք է լինեն կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն: Նախատեսված է հակահրդեհային ազդասարք, բոլոր աշխատողները պետք է ապահովված լինեն բանվորական արտահա-գուստով, կոշիկներով, ձեռնոցներով, ակնոցով և անցնեն հրանգավորում: Մինչև 18 տարեկան մարդկանց աշխատանքը տեղամասում արգելվում է: Մուտք գործարանի տարածք թույլատրվելու է միայն անցագրերով: Ձեռնարկությունը ներքին գործերի նախարարության հետ համատեղ պետք է մշակի վթարների վերացման սցենար ու անցկացնի վարժանքներ: Մթնոլորտային օդի որակի կանոնավոր մոնիթորինգը թույլ կտա արագ արձանագրել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար: Մոնիթորինգի անցկացման նախնական ծրագրում նախատեսված է՝ նմուշառում, չափումներ՝ ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա՝ Aerocet 831 կամ նմանատիպ սարքով՝ 10 օրը մեկ անգամ, աղմուկի չափման սարքով՝ 15 օրը մեկ անգամ: Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերությանը նախատել է ծախսել տարեկան 930 000դրամ:

Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Արարատ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Արարատի մարզպետարանը, մասնակիցները հանգել են այն եզրակացությանը, որ ներկայացված հաշվարկները հավաստի են և տվյալ գործունեության համար սանիտարապաշտպանական գոտի չի սահմանվում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Արտադրությունում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքով, որը վերահսկում է դրա տարածքում հրդեհի բռնկումը:
- Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:
- Անհրաժեշտ է պահպանել մթնոլորտային օդը, մակերևույթային և ստորերկրյա ջրերը, հողն ու ընդերքն աղտոտող վնասակար նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների սահմանները:
- Չգերազանցել վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունները արտանետումներում և արտահոսքերում.

- Անհրաժեշտ է պահպանել աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսականության, ռադիացիոն ճառագայթման և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները:
- Պահպանել հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները, գյուղատնտեսական հողերի պահպանության կանոնները, սանիտարական պաշտպանիչ գոտիների սահմանված չափերը:
- Անհրաժեշտ է պահպանել մշտադիտարկման ծրագրով նախատեսված գործիքային չափման եղանակով մթնոլորտային օդում փոշու, ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ծծմբի երկօքսիդի և սահմանային ածխաջրածինների կոնցենտրացիայի վերահսկում: Ընդ որում, դիտակետերը /նմուշառման վայրերը/ նախատեսել ինչպես գործարանի, այնպես էլ բնակելի թաղամասի տարածքներում:
- Առաջնորդվել և պահպանել «Կենդանական աշխարհի մասին» և «Բուսական աշխարհի մասին» օրենքների պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Գործունեությունը սկսելուց առաջ անհրաժեշտ է ստանալ ջրօգտագործման թույլտվություն՝ համաձայն Ջրային օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ «Ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն»:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատված «Աղակալված ճահճուտ» բնության կենսաբանական հուշարձանի ստեղծման հիմնական նպատակն է պահպանել միջազգային նշանակություն ունեցող արժեքավոր ջրաճահճային էկոհամակարգը, որտեղ աճում են խիստ հազվագյուտ, ռելիկտային և էնդեմիկ բուսատեսակներ: Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ գործունեության համար նախատեսվող տարածքին անմիջապես կից գտնվում է «Աղակալված ճահճուտ» բնության կենսաբանական հուշարձանը, որին սպառնացող հիմնական վտանգներից մեկը վերջինիս չորացումն է գրունտային ջրերի մակարդակի իջեցումով պայմանակավորված՝ անհրաժեշտ է բացառել հորատանցքից գործարանի տեխնիկական ջրամատակարարումը և օգտվել միայն «Վեոլիա Ջուր» ընկերության ջրամատակարարումից, բացի այդ, ընդունելով ի գիտություն գործարանի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական ջրի օգտագործման փակ շրջանառու համակարգի, ինչպես նաև կենսաբանական մաքրման կայանի հանգամանքը, այնուամենայնիվ բացառել վերջիններիս և այլ թափոնների հնարավոր արտահոսքը դեպի հուշարձանի զբաղեցրած տարածք, ինչպես նաև ներառել շրջակա

միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագրում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ջի Թի Բի Սթիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքում սև մետաղի ջարդոնի վերամշակման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան